

## Ա Զ Բ Ի Հ Ե Խ Ա Ա Ր Ա Յ Ա Ն Ն Ե Բ Ը

### S Ո Ա Խ Ո Մ Ա.

Բ.

Տրախոմա հիւանդութիւնը նախ կ'առաջացնէ բորբոքում մը շաղկապիչ թաղանթին մէջ, թաղանթը կը լիցուի արիւնով, կը հաստնայ և մէջը կը գոյանան բազմաթիւ մանր, հունտի նման, գորշագոյն, կլոր հատիկներ; թաղանթը կը կորսնցնէ իր ողորկ յատկութիւնը, կը գոյանայ խորդուրորդ և կը սկսի քերել եղջիւրային թաղանթը Կոստիրը կը ծանրանան, կը թանձրանան, հիւանդը կը զգայ շարունակական անհանգատութիւն, շատ տնկամ՝ ցաւ, ասլնտուք, աչքերը կը քերուին, կ'արցունքութիւն կը ճպուտին, տեսողութիւնը կը խանգարուի, կը պղտորի, սաստիկ դէպքերուն՝ թարախ կը վագէ և հիւանդը գլխու ծանրութիւն ու ցաւ կը զգայ Հիւանդութեան առաջին շրջանը ամիսներով կը շարունակուի՝ հիւանդութեան տեսակին, մարդու դիմադրական ուժին և պայմաններուն համաձայն, նուազ անհանգատացնող կամ շատ ուժեղ և սուր ու սաստիկ Երկրորդ շրջանը կը սկսի, երբ քանի մը հատիկներ հասուննան, պայմին, պարագուին, տան թարախ և այդ փոքրիկ հունտերուն տեղ վէրքեր; Այդ փոքրիկ վէրքերը կը սկսին կամաց կամաց առողջանալ և սպիանալ, իսկ ուրիշ հատիկներ ալ կը սկսին ուսիլ, թարսիստիլ ու պայմիլ և այցգէս անվերջ, ամիսներ ու տարիներ;

Եղջիւրային թաղանթը իր կարգին կը սկսի բորբոքիլ՝ չնորհիւթարախին և կոսի շաղկապիչ թաղանթի խորտուբորտութեան, կը լիցուի արիւնով, թարսիսով, կը կորսնցնէ իր թափանցկութիւնը, կը նուազի տեսողութիւնը, աչքը սաստիկ կը ցաւի, կ'ասղնաէ, գլխուցաւ կը պատճառէ բաւականին ուժեղ: Տարիներու ընթացքին, տեսողութիւնը կրնայ պակսիլ մինչեւ մէկ երրորդ կէս, նոյնիսկ երեք քառորդի չափու թիչ չեն այնպիսի դէպքեր, մանաւանդ անփոյթ և տղէտ մարզոց մօտ, երբ աչքը կը կուրանայ, եղջիւրային թաղանթը կը գոյանայ գորշ—սպիտակագոյն և անթափանցիկ:

Այս շրջանին՝ կրնան բորբոքիլ և արցունքին խողովակներն ու տոպիրակը, ծանր ցաւեր կը պատճառեն, և շարունակ աչքերը կ'արցունքութիւնն ու կը թարախսոտին: Քանի մը տարի յնտոյ, կը սկսի հիւանդութեան երրորդ շրջանը Բորբոքումը կը վերջանայ, շաղկապիչ թաղանթը կը կորսնցէ իր յատկութիւնները, կը կազմուին բազմաթիւ սպիներ, որոնք կ'ելլեն կամիկին վրայէն կաթնագոյն

շերտերով։ Սպիտացած թաղանթը կը կորսնցէ իր ճկունութիւնը, կը կծկուի, կոճիկը կ'այլանդակուի, կը կծկուի Այն ատեն կոպին ներսի մակերեւոյթը կը կարճնայ և արտեւանունքներով ծածկուած կոպին եզերքը կը բրջուի գէպի ներս և կը գոյանայ նոր պատճառ մը եղջիւրային թաղանթին շարունակ քերուելուն և բորբոքմանն Կ'անցնին տարիներ, թէ շաղկապիչ թաղանթը և թէ եղջիւրայինը բոլորովին սպիտացած են, ծորում չեն տար և կը չորնան, աչքը կը կուրնայ ինչ է պատճառը այս ծանր հիւանդութեան։

Դարերու ընթացքին շատ հետազօտութիւններ կատարուած են, սակայն առայժմ գեռ լրիւ պարզուած չէ թէ ի՞նչ տեսակ մանրէներ են հիւանդութեան պատճառ Պարզուած է թէ ազքատ դասակարգը, որ սափուած է ընակիլ փոքր տարածութեան վրայ, աւելի ենթակայ է այդ հիւանդութեան։ Վերջերս ոռւս գրողները կը կարծէին թէ տրախոման յատուկ է գիւղացիներուն, որոնք կը վարակուին ազբին միջոցով։ Նոյնպէս կարգ մը Ֆրանսացիներ Թունուզի մէջ տեսած են որ ճագարները ծնելէ քանի մը օր վերջ, կը հիւանդանան տրախոմայով, ինչ որ կը վերագրեն այն պատճառին, թէ ճագարները աչքերը միշտ վար կը պահեն, դէպի գետին, աղտոտ խոտերով և աղբով լեցուն հողին վրայ։

Ցայտնի է որ հրէական ցեղը կարծես թէ մասնաւոր հակում մը ունի այդ ախտով վարակուելու (օր. Եգիպտոսի, Սուրիոյ Արաբները, Հրեաները, Ասորիները)։ Արեւելիան և հարաւային երկիրներուն, Ասիոյ, Աֆրիկէի մէջ տարածուած է Բաւական տարածուած է նաեւ Ռուսիոյ մէջ, Գերմանիոյ, Հունգարիոյ, Պալքաններուն մէջ նոյնպէս Արեւմտեան երկիրներէն Պելճիքա բաւական վարակուած է տրախոմայով։ Դպրոցները, զօրանոցները, գիշերօթիկ հաստատութիւնները նպաստաւոր պայմաններ են տարածելու համար տրախոման։

Տրախոմայով չվարակուելու և չտարածելու համար մեծ արժէք ունին հետեւեալ ընդհանուր առողջապահական պայմանները։

- 1.— Աղտոտ ձեռքերով երբեք չդպչիլ աչքերուն։
- 2.— Որքան կարելի է հետո կենալ փոշոտ և աղտոտ տեղերէն ու առարկաներէն։

- 3.— Լուացուիլ՝ պառկելէ առաջ օճառով և մաքուր ջուրով։
- 4.— Ունենալ երեսի մասնաւոր մաքուր սրբիչ, բարձ, թաշկինակ։
- 5.— Քննութիւն կատարել տարեկան քանի մը անգամ դպրոցներու և զօրանոցներու, ինչպէս նաեւ գիշերօթիկներու մէջ։

- 6.— Բժշկութեան մէջ կը գործածուին գլխաւրապէս հականեխական գեղեր, ասիս պորիք (2%), սիւլլիմէ (1,3000), արծաթի աղեր (1%—10%), արջասպ (sulf. de cavigre) և բաղմաթիւ ուրիշ գեղեր, ելեկտրականութիւն, Ռէօնթէկնեան ճառագայթիւն, եւայլն։

Բժ. Տէր-ԴԱԽԹԵԱՆ